

նակ է, որ թէ ասորիները և թէ հայերը մտա-
ծեն, որ միմեանց դէմ թշնամանալով, խնորհա-
ներ լարելով, հապածանքներ սաղեղելով, *Պետտու*.
ևն միայն իրանց, անտանելի են դարձնում իրանց
վիճակը, *Պետտու* են իրանց ապագային և ջլա-
տում են իրանց ոչները:

Հայ և առօրին բանխմաց, հասկացող և առաջա-
ւոր մարդկանց վրա պարտաւորութիւն կայ աշ-
խատել վերացնել մէջտեղից թշնամութեան շար-
ժառիթները, տարածաշնթթիւնները և վերահասա-
տարը նախկին բարեկամական յարաբերութիւն-
ները:

Այդ է պահանջում թէ հայ և թէ ասորի ժողովրդի շահը:

ԱՀԱ ՎԱՐՄՈՒՆՔ

Բառ չենք գտնում՝ նկարագրելու այն ազեղ վարմունքը, որ նորից թոյլ է տուել իրան «Արձազանքը»:

Կ, ՊՕԽԻ «Հայրենիք» լրագրի № 908-ի մէջ
տպւած է, առաջին հերթի վրայ, մի գրութեան անուն
ուղղձ սուլթան Աբդուլ-Համիդի դաճակալութեան
19-րդ տարեդարձի առիթով Այդ տեսակ մի ու
ղղձ տպւած է և «Արեւիք» լրագրի № 3159-ի
մէջ 91

Երկու յօդուածներն էլ չեն զանազանւում միմիանցից. երկուսն էլ ամենաառաջ գտլւածանութիւններ են չալլում սուլթանին:

Ուլ ծանօթ է Կ. Պոլսի թէ թուրք և թէ օսման
ազգի մամուլի դրութեան հետ, նա գիտէ, որ ոչ
միայն հայ, այլ և թուրք, ֆրանսիական, յունա-
կան և այլ լրագրիներ, որոնք հրատարակու-
ն են թիւրքիայի մայրաքաղաքում, ւտիպլւս ձ են
այդ տեսակ ուրդման և գովասանութիւնն
տպարակ: Դա պարտաւորիչ է:

«Հայրենիք» լրագիրը նոյնն է անում, ինչ որ ասում են «Արեւիկը», «Փոռնջ», «Սարաճ», «Մանգուսէ», «Levant Herald» և այլ լրագիրները։ Պատճառը հասկանալի է։

Բայց «Արձադանքը», թողնելով բոլորին, մի միայն «Հայրենիքի» պոէզիան է բռնել, և իր վերջին համարի մեջ ափսոսանքի և նկարագրում այդ բողոք-թիւնը, որ ընթերցողը կը կարծէ թէ միայն «Հայրենիք» ևրացիին է, որ այդ տեսակ յօդուաներ է և ապուստ

Բացայալէ հերիք չէ: Սրճատները յայտնում է, որ իբր այլ յօդուածի հեղինակը Արփիար Արփիարեանն է: Բաց հնք անում ՀՀ րենիքը, նայում ենք յօդուածին և նրա ներքոյ թէ որ և է ստորագրութիւն չենք գտնուալ նոյն իսկ ամբողջ թերթի մէջ ոչ մի տեղ ոչ մի անիւն: Եւ Սրփիար Արփիարեան՝ նոյնն հետեւ անգամ չենք գտնում...

«Սյրագանք» լրագիրը շատ լաւ գիտէ, Սյրիկար Սրիկարեանը «Հայրենիք» լրագրի լրբադրագետն էր. բայց երկու տարի առաջիւրբ կատակաբանական պահանջմամբ, նրա նաւը բոլորովին քնդկեց այդ լրագրի ծակտակ Հայրենիքին, որ իրաւունքով «Սրագանք» իր թող ի տակիս հրապարակով յայտնեի, որ Սրիկարեանն է խմբագրող «Հայրենիքը»:

Այդ էլ հերիք չէ:
«Արձագանքը» յայտնում է, թէ Արվիրաբ Լ
փխարեանը «Մշակի» թղթակից Հայկակն
Դախ՝ մեքը կարծում ենը, որ Հայկակն անուհի
էր անուհ, որ այնքան մեծ ծառայութիւն է
տուցել հայ զբաղանութեան, որքան չէ կարո
ցել անել «Արձագանքը» իր ամբողջ գոյութի
ւնը ժամանակ,—միմիայն պատիւ կարող է բերել
փխարեանի անուան: Բայց հարցը զբա մէջ
Այն հարցն այն է, թէ ինչ իրաւունքով «Ար
զանքը» թող է տալիս իրան բաց անել թի
ոհանում ապրող մի անձի ծածկանունը...

վերջին խօսք: Որ սուլթանին շողորթի
թիւններ անկը յառուկ չէ միմիայն հշայնիքը
խորհուրդ ենք տալիս Վրձազանքին կար
«Արևելքի» մէջ տպել (և «Արձազանքի»
արտատպել) մայր եկեղեցի մէջ կատար
հանուին նկարազարդեան հետեւի կտորը:

«Այս պատրիարքական տեղապահ սրբադ
քարոզ խոսելով՝ օգոստոսիան սուլթանի դահ
լութեան տաբեղարձին առթիւ յիշեց նորին
սերական վեհափառութեան աշխարհա
գործերը ու հայրական շնորհները: Հանդէսը
վերջաւորեալ էր եւս երգում, մը, գոց եւ
ցինի մայր բեկեկցող դարաց դասը»:

Այս էլ ձեր գոված Դիմաքսիան եպիսկոպոսը...
 Էջալոց Մայր եկեղեցում դպրաց դասը թիւր-
 երէն է երգում, բացականչում է «Քրձաղանքը»:
 Ում չնորհիւ. ձեր գոված Դիմաքսեանի շը-
 րորհիւ, կր պատասխանենք մենք:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, սեպտեմբերի 4-ին

Մօտ չորս տարի է եւ դադարել եմ Արժա-
նանք» անունով թերթին աշխատակցելուց և երեք
տարի է իմ բոլոր յարաբերութիւնները ընդհատել
ունիս խմբագրի, նոյնպէս և նրա աշխատակիցներին
եւս: Եղել է ժամանակ, որ ես իմ բոլոր ոյժերը գոր-
ծադրել եմ «Արժանքանքի» վրա: Կատարել եմ
բարատողարկի և կորեկիւտորի պաշտօններ, եղել
եմ նրա գլխաւոր աշխատակիցը, գրել եմ, թարգ-
մանել եմ, խմբագրել եմ և ուղղել եմ իւրմ-
ապօր Յովհաննիսեանի անդադաէտ յօդուածները:
Այդ ժամանակ Յովհաննիսեան ոչ մի կօմպլի-
մենտ չէ խնայել իմ հասցէին: Այդ ժամանակ ես
նրա համար եղել եմ և տողաւորաբար վիպասան,
և ընդունակ հրապարակախօս, և անկաշառ քրն-
իստիկ, և աջնիւ ու չիտակ մարդ:

Այսօր մի և նույն մարդը ուրիշ երգ է երգում:
Նա պատեց պատ է ընկնում, որ իմ անունը մի
վերջ վայր գցի հասարակութեան առջև: Երկվ-
վայ իր գոված մարդուն այսօր անտանուտ է
հանուղղելի աշակերտ, մանկալի է աչքն և
այլն:

Ինչէն է պատճառը այս ալլալիտութեան,—կը հարցնէի, անշուշտ, ընթերցողը: Գործին անսակ-ղեակ մարդիկ կարող են ասել, որ պատճառը իմ այն պաշտօնական նամակն է Քամոյեանց հեկեղեցու հայիւններէ մասին, որ տղվոց «Մշա-կութ»: Ոչ: Արեգար Յովհաննիսեան այնքան խո-րամանկ է, որ չնչին պատճառներով մարդկանց հետ չի թշնամանալ: Ոչ այսօր և ոչ էլ ե-րէկ է սկսվել այդ մարդու թշնամութիւնը իմ դէմ: Այն օրից, երբ ևս հնուացել եմ «Արձագան-քից», կորելով իմ բոլոր յարաբերութիւնները նրա հետ, այն օրից Յովհաննիսեան կատաղել է իմ դէմ: Ակզբում նա հայեցում էր ինձ զազա-գողով, տղղով, բայց հայեցում է «Արձա-գանքի» ամէն համարում: Միայն վերջին ժամա-նակ իր դիմակը հանեց և սկսեց կռւել երես առ երես:

Գուցե Արգար Յովհաննիսեան դարձեալ ինձ հետ չը թշնամանար, եթէ ես վերջին չորս տարիները արձագանքականների կուսակցութեանը ամենուրեք, ուր կարող էի, ցոյց չը տայի ըացարձակ հակակրօթիւն Գուցե ես դարձեալ նրա թերթում գովէի, եթէ դրականապէս չը մերժէի աշխատակցել այդ թերթին։ Բայց, չը նայելով Յովհաննիսեանի միջոցերին, չը նայելով նրա աշխատակիցներին, մի քանիսի միջև նորդութեանը, ես մերժեցի, ես անա այսօր դարձաւ «պարսիկ, մանկլախիկ» եւ այլն։

Եղև է մի ժամանակ, որ ես մինչև անգամ վեր
գտվել եմ նրա մասին վառ խօսողների, մասնա-
ւանդ վառ գրողների ղէմ, համարել եմ նրա
անարդար հալածանքի ենթարկված մի մարդ, ո-
ւայպէս թէ այնպէս, հասարակական գործիչ է
Բարեբախդաբար երկուսն էլ տեսել իմ հաւատը
իրողութիւնը հետզհետէ բաց է արել իմ աչքերը
եւ ես ոգեւոր եմ իմ սխալը:

Եւ ականատես եմ եղել փաստերի, որոնք
առ մի և հետզհետէ խախտել են իմ հաւատը ղեկ
Թովհաննիսեան և մի օր, վերջապէս, իմ մեջ դար
նել է մի այնպիսի հակակրօնութիւն, որ ես այլ
չէի կարող աշխատակցել նրա թերթին: Հէ
այդ ժամանակ ես զգացել եմ, թէ՛ որչա
միամտ եմ եղել, որչա՛ս մոլորված եմ ինչ
ևս գործերի պատահառով թշնամացել եմ շա
պատկառելի գործիչների հետ: Նոյնն է պ
տահել պ. Աղայեանին, նոյրը և պ. Պապեան
ցին, որոնք այսօր երես են դարձրել Թովհան
սեանից. նոյրը պատահեց և Բաֆֆին: Այս, և
կեղծօրէն խոստովանութեամբ եմ, որ ես սխալվ
եմ եղել և ազատ խղճով զղշում եմ, որ մի ժ
մանակ աշխատակցել եմ Վրճապանքին:»

Թող այդ մասին հաստատված թխնը ինձ մեղ
դրէ. նա իրաւունք ունէ: Բայց համոզված եմ,
ամեն մի օգտիմիտ—երեսասարդ, իմէ իմ
ղը լինէր, կարող էր ինձպէս մոլորել: Այն
մակը, որ ես ամեն օր դժբաղդութիւն եմ ու-

արալիկ շինելած, որ դժուար էր միանգամից ըզ-
րալ և հասկանալ, թէ ինչ է թագնւած Նրա
ռալ:

ինչ և է, ասցեալը անցած է։ Այսօր Յովհաննիս-
եանի և իմ յարաբերութիւնները պարզ են ա-
նենքի համար։ Այն հայոյանքները, որ այժմ
այդ պարոնը շտալուս է իմ հասցէին, արդարա-
ւում են նրա թշնամութեան և հասկանալի-
քի, թէ՛ նրանք ինչ աղբիւրից են բլլուում։
Գարոջ եմ ապահովացնել Յովհաննիսեանին, որ
նչպէս մի ժամանակ ես նշանակութիւն չեմ
տուել նրա գովասանքներին, նոյնպէս և այժմ
պէտք է արհամարհեմ նրա յիշմանը։ Սակայն
այդ ինձ չի խաղաղարի, ղէպզը պահանջելու, մի
նրա նազով հարուածել Յովհաննիսեանին, իմ կա-
ողողութեան չափ։

Ոն, ուրեմն, ալ. Յովհաննիսեան, հայհոյեցէք ինձ որքան կամենաք, երբ կամենաք և ինչպէս կամենաք, ձեր ասպարէզը բաց է: Դուք ունեք ձեր արամադրութեան տակ մի թերթ, որի ղեռնակը բաց են ամեն մէկի համար, ես չունեմ: Դուք ունեք գրչակների մի խումբ, ես չունեմ: Տնանում էք, ուրեմն, բոլոր ոյժերը ձեր գրչին են: Իսկ իմ կողմն է միայն իմ գրչը և իմ խիղճը, որ երբեք ոչ ոքի չեմ վաճառել, իս ոչ ղքի հետ կապված չեմ եղել և այժմ էլ չեմ ոչ նկրթապէս, ոչ բարոյապէս, ոչ ղքից չեմ ունեցել և չունեմ ոչ ակնկալութիւն և ոչ երկիր: Ես սխալվել եմ, յափշտակվել եմ, այդ ճիշդ է, բայց երբեք մտաւաճառութեամբ չեմ պարապվել: Ով ինձ լաւ է ճանաչում, նա չատ լաւ դիտէ, որ ես իբրև ղիւրաջուան ես յափշտակվող մարդ, սխալներ անում եմ, բայց երբեք իմ սխալների մէջ ղեր չեն խաղացել շահասիրութիւնը, կեղծասրութիւնը և շողոքորթութիւնը:

կրկնում եմ և միշտ պէտք է կրկնեմ, որ զեզուանքով եմ յիշում այն օրերը, երբ ես աշխատակցել եմ ձեր «Արձագանքին»: Հաւատացե՛ք, պարոն Գովհաննիսեան, որ այս խօսքերը բղխում են իմ սրտի խորքից:

Շիրվանզադէ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Կարա, օգոստոսի 31-ին
Տեղիս գաղթականներին հայրենիք վերադարձ
հետև համար օգոստոս 11 և 18-ին, «Մշակի»
խմբագրությունից ուղարկված մի-մի հարիւր բու-
լիւն, ընդամենը 200 բուլբլի, վարչութիւնս ստա-
ցած ինքնով, պարտք է համարում յայտնել ի
խորին շնորհակալութիւնը յարգելի խմբագրու-
թեան և նուիրատու անձերին:

Փոխ-նախագահ՝ Ա. Ղազարեանց
Գործավարի տեղ՝ (չէ կարդացվում)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պօլսից մեկ գրում են. «Սասունի լեռներ հայերին զսպելու նպատակով՝ կառավարութիւն հոն ուղարկած է զօրք և քրդական զինուոր»:

Թիֆլիսի քաղաքային դուման որոշել է բան-
աջադեպային երեք նոր դպրոցներ, արդեն գոյո-
թիւն ունեցող քաղաքային դպրոցների նման: Ո-
սումնարանական չրժանի վարչութիւնը յայտն-
ի է, որ այդ դպրոցները կարելի է բաժնաւ միա-
յայն պայմանով, որ այդ դպրոցներում ընդուն-
ւաւոր, աղ գո թ ի ռ յ ն եր ի եր եր եր եր ա-
լաւոր, և դասաւարութիւնը լինի ռուսերէն
դասով:

Մեզ հաղորդում են, որ մինիստրը երբեք չի
կիս կր հասնի ոչ աւելի վաղ, քան ամսի 22-ը:

1000

Մեզ հաղորդում են թավրիղից, որ թավրի
հայոց առաջնորդը մի հեռագրով ղրկել է պե-
տից բարձր կառավարութեան, թէ հրան, նկա-
գրելով այն նեղ վիճակը, որի մէջ գտնվում
Արարատականի հայերը վերջին ամիսներ
թացքով: Այդ հեռագրին, ինչպէս զրում է
թղթակիցը, մինչև վերջին օրերս ոչ մի պատ-
խան չեն տուել թէ հրանից:

[illegible]

3 ր. 50 հոպէկ, հանդանակած հետեակ անձինքն-
բոյ. օր. օր. Ա. Տէր-Թովմասեանց՝ 3 ր., Զ. Նա-
լարեանց, Օ. Նալարեանց, տ. տ. Վ. Ղուկա-
սեանց, Հ. Մանուկեանց, Բ. Ղուկասեանց՝ մի-մի
հուրկը. Ա. Յովնանեանց՝ 50 հոպ.՝ Ուրեմն նախ-
կին 3505 օրուրի 72 կ. հետ այժմ ունենք 3514
օրուրի 22 հոպէկ:

Մենք ստացանք Քաղաքից Գէրտ մանկավարժի
 Գերտուրդներ ինտելիգենտ մայրերին՝ անունով
 աշխատութիւնը, թարգմանութիւն Ն. Գաւթեան-
 անի հրատարակութիւն Արօրածապարանի։ Խոր-
 հուրը ենք տալիս հայ կանանց, որոնք նպատակ
 են դրել իրանց ճակատկենքին իրանց ձեռքով մե-
 ծայցնել և դատարարակել, կարգաւ այդ գիրքը։
 Պարզ, հասկանալի կերպով, անհրճելի փա-
 տերով Գէրտը ապացուցանում է, թէ ինչ ազգին
 բարոյական և նիւթական շնամներ է արտադրում
 բռնաններ, դայեակներ սպանելու սովորութիւնը,
 որը, դժբախտաբար, սկսել է տարածվել և մեր
 միջ։ Կնոջ բարոյական ոյժը, նրա հոգու աշխու-
 թիւնը փայլում է միայն այն ժամանակ, երբ նա
 ուրարութեամբ յանձն է առնում զանազան դո-
 հադութիւններ իր զաւակներին իր ձեռքով դա-
 տարարակելու և մեծացնելու համար։ Պ. Գաւթեան
 թարգմանութիւնը կատարել է սահուն և հակա-
 նախ լեզուով։ Գրքի գինն էլ մատչելի է,—15
 կոպէկ։

Զորքը ճարձի օր, սեպտեմբերի 7-ին, թիֆլիս
եկաւ Բաւխարայի էմիրը՝ Միր-Սաիդ-Միր-Աբդու-
Ալլախովսանը, իր սպիտակ հետ միասին։ Էմիրը
մտադրութիւն ունի մեր թաղաքում մտաւ մօտ
մի շաբաթ։ Այստեղից Բագուի վրայով պէտք է
վերադառնայ Բաւխար։

Տագադրելով այս համաժողով ալ. Երվանդադէի
համարը, յայտնում ենք, որ այս օրվանից վա-
կում ենք Մշակի» էջերը «Արձադառնքի» խմբա-
գրի և Երվանդադէի մէջ ծագած վէճի հա-
մար: Այլը զգրական պոռնկութեան» մարին մեր
Կաթիձըք մի քանի խօսքով կը յայտնենք միւս
համաժողով:

Մեր խմբագրութեան մէջ ստացվեց «Սմբատ
Շահադիվեանի երեսնամեայ (1862—1892) յօբե-
լեանը» վերնագրով գիրքը, որ խմբագրել է Ա. Մա-
տուրեան և հրատարակվել է Մոսկվայում Յ. Տէր-
Յակովլեանի ծախքով: Գիրքը բովանդակում է
իր մէջ Սմբատ Շահադիվի 1892 թ. ապրիլի 9-ին
կայացած 30-ամեայ յօբեկոխի հանդիսի նկար-
արարութիւնը և այդ առիթով ստացված բոլոր
շնորհաւորական ուղերձները, հեռագիրները, կար-
դացած ճառերը, ինչպէս և յօբեկոխի երկու
պատկերը, մինչև այժմեան, միւսը երկասարդա-
կան հասկումէ Տպագրութիւնը վերին աստիճա-
նի շքեղ է. գինն է 1 ռուբլի և վաճառումի-
ն գրայական ֆօնդին, որի հիմքը զրկած է Շահադի-
լի յօբեկոխի առիթով:

«Նորերս աւարտւած ընդունելութեան քննութիւնները կրկին պարզ կերպով ցոյց են տալիս —ստու է «Русскія Вѣдомости» լրագիրը, թէ որքան սակաւաթիւ են իւր ըստընդուն մասնագիտական դպրոցները մանդանում Պետերբուրգը ստացած տեղեկութիւններէ չամտաւ, այնուհետեւ մասնագիտական բարձր դպրոցներից ոչ մէկը կարողացաւ ընդունել այն բոլոր երկրասահլիւրին, որոնք ցանկանում էին և իրանց պատրաստութեամբ իրաւունք ունէին մտնել այդ դպրոցները, ընդհակառակը, այդ դպրոցների ընդունելի են նախնական տարրական ինքն կամ

ֆ- ուրերը: Ոչ միայն մայրաքաղաքներում, բայց
 տեւառական ղաղրոցներում, օրինակ, խարկ
 տեխնոլոգիական ինստիտուտում, մերժել են չ
 ղի շատերին: Եւ դա մի պատահական երևոթ
 ր- յառուկ այս տարվան. արդէն վաղուց լավու
 ա- ներկատասարդ անադոպտներին նոյն հառաջանքն
 են իրանց յոյսերի մէջ խաբւած ծնողներին
 ղն- դառն դանդառները: Կարելի է արդեօք մի
 մե- անգամ բնական համարել մի այդպիսի դրոթ
 ա- Այն փաստը, որ եղած ղաղրոցները լցւած
 ստիպում է մտածել նորեր հիմնելու մասին:
 կայն հարց է ծագում, թէ որտեղ է յարմար
 րարձրագոյն ղաղրոցներ հիմնել.—մայրաքաղ
 ա- ներում, աւելացնելով արդէն այժմ եղածն

